Ընթացակարգ

Յուրաքանչյուր ամիս անցկացվում է մրցույթ՝ 10 անվանակարգերում լավագույններին որոշելու նպատակով: Մասնակիցները պահանջվող տեղեկատվությունը կարող են ներկայացնել մինչև յուրաքանչյուր ամսվա 10-րդ աշխատանքային օրը ներառյալ: Արդյունքներն ամփոփվում և հրապարակվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

Յուրաքանչյուր ամիս մասնակիցները սահմանված ժամկետում անհրաժեշտ տեղեկատվությունը փոխանցում են համապատասխան լիազոր մարմնին՝ դիտարկման: Յուրաքանչյուր լիազոր մարմին ձևավորում է հանձնաժողով և յուրաքանչյուր անվանակարգում ընտրում երկու լավագույնների:

«Լավագույն ուսուցիչ» և «Լավագույն խմբակավար» անվանակարգերին մասնակցելու համար մասնակիցներն ուղարկում են տվյալ բնագավառի դասի կամ խմբակի տեսագրություն՝ 10-12 րոպե տևողությամբ, ինչպես նաև տեղեկատվություն՝ 1-2 էջի սահմաններում՝ նշելով՝ ինչ նպատակ է դրված եղել իր առջև, ինչ խնդիրներ է լուծել, ինչ վերջնարդյունքներ է ապահովել:

«Չափորոշչի ներդրմանն աջակցող լավագույն տնօրեն» անվանակարգին մասնակցելու համար տնօրենը ներկայացնում է չափորոշչի ներդրմանն ուղղված գործողությունների հաշվետվություն՝ 2-3 էջի սահմաններում:

«Չափորոշչի ներդրմանն աջակցող տնօրենի տեղակալի պաշտոն զբաղեցնող լավագույն տեղակալ» անվանակարգին մասնակցելու համար տնօրենի տեղակալը ներկայացնում է չափորոշչի ներդրմանն ուղղված գործողությունների հաշվետվություն՝ 2-3 էջի սահմաններում:

Լավագույնների ընտրության չափանիշները սահմանվում են «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» (այսուհետ՝ ԿԶՆԱԿ) հիմնադրամի կողմից:

Ընտրված մասնակիցների մասին տեղեկատվությունն ուղարկվում է ԿԶՆԱԿ՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 12-րդ աշխատանքային օրը ներառյալ:

ԿԶՆԱԿ-ի կողմից ընտրվում է յուրաքանչյուր անվանակարգի լավագույն մեկ մասնակից յուրաքանչյուր մարզից և փոխանցվում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն):

Հաղթողների մասին տեղեկատվությունը հրապարակվում է նախարարության պաշտոնական կայքում՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

Յուրաքանչյուր մասնակից տարվա ընթացքում միայն մեկ անգամ է կարող հաղթող ճանաչվել նշված անվանակարգերից որևէ մեկում:

Ամբողջ տարվա ընթացքում լավագույն ճանաչված մասնակիցները տարեվերջին մասնակցում են տարվա լավագույնների մրցանակաբաշխությանը՝ արդեն իսկ ներկայացրած ծրագրերով և տեղեկատվությամբ: Նախարարության կողմից ձևավորված հանձնաժողովի կողմից ընտրվում են յուրաքանչյուր անվանակարգի լավագույնները: Վերջինները պարգևատրվում և արժանանում են «Տարվա լավագույն» կոչմանը: